

## ՖՅՈՒՋԻԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ. ԿԱՆԱՅՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1996 թ. կին երաժիշտներ քսանվեց երկրներից (կոմպոզիտորներ, կատարողներ, դիրիժորներ, երաժշտագետներ, կազմակերպիչներ) "Donne in Musica: Gli Incontri al Borgo" Առաջին Միջազգային Սինպոզիումի վերջում կազմեցին մի փաստաթուղթ 1996 թ. Ֆյուլջիի Հռչակագիր անունով:

Այս փաստաթուղթը անցել է աշխարհի կին երաժիշտների կազմակերպություններով եւ ակադեմիան որոշում է թե որն է կին երաժիշտների առաջնային նպատակը:

1999 թ. փաստաթուղթը վերանայվել է եվ հետեւյալն է.

. Կոչ է արվում յուրաքանչյուր երկրի խրախուսել այն կազմակերպությունների ստեղծումը իր իսկ սահմաններում, որոնք պատասխանատու են կին կոմպոզիտորների վերաբերյալ փաստաթղթերի եւ տեղեկատվության համար: Այդ կազմակերպությունները պետք է կարողանան ստանալ եւ այլ կազմակերպություններին ուղարկել տեղեկատվություն երաժիշտ կանանց վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկություն հավաքել բոլոր այն հաստատությունների եւ երաժշտական կառույցների վերաբերյալ, որոնք պատասխանատու են երաժշտության ստեղծման, աջակցության եւ ծրագրավորման համար. ժամանակակից եւ հնագույն երաժշտության փառատոներ, Կին կոմպոզիտորներին, կատարողներին, ֆոնդային հնարավորություններին եւ դրամաշնորհներին նվիրված փառատոներ: Կին երաժիշտները պետք է մեծ դեր ունենան արշավների եւ գործունեության ծրագրավորման, աջակցման եւ ծավալման մեջ, որպեսզի կանանց ստեղծագործությունների տոկոսը ներկայիս նվազախմբային եւ երաժշտական ռեպերտուարում աճի: Կանայք պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերեն իրենց երկրում երաժշտության կազմակերպման մեջ եւ խրախուսեն փոխանակումը կոմպոզիտորների եւ կատարողների միջեւ: Կազմակերպությունները պետք է կապի մեջ լինեն [www](http://www)-ի միջոցով:

. Շատ երկրների օրենսդրությունը կանանց համար ապահովում է հավասար հնարավորություններ եւ իրավունքներ, եւ տեսականորեն պետք է թույլ տա կանանց մուտքը իրենց հետաքրքրող բոլոր ասպարեզներ: Գործնականում, ինչեւէ, ոչ միշտ է այդպես: ԿԵՄ կազմակերպությունները, պետք է հաշվի առնեն այն փաստը, արդյոք իրենց օրենսդրությունը համապատասխանում է իրենց երկրի սոցիալական իրականությանը: Շատ երկրներում կանայք անբավարար կերպով են ներկայացվում հաստատություններում: Մենք պետք է ակտիվորեն աջակցենք կանանց ներկայությանը հանձնաժողովներում, կոմիտեներում, եւ բոլոր այն տեղերում, որտեղ նրանց տաղանդը կարող է օգտակար լինել: Կին քաղաքական գործիչները պետք է տեղեկացվեն օրենսդրության եւ պրակտիկայի միջեւ եղած տարբերության մասին եւ կին երաժիշտների անունից պետք է պաշտպանեն ֆոնդերի բացման հնարավորությունները:

. Կին երաժիշտներին վերաբերող տեղեկությունները պետք է փոխանցվեն երաժշտության ուսուցիչներին եւ տղամարդկանց, եւ կանանց: Կին երաժիշտների կողմից ցուցաբերված աջակցությունը բոլոր մշակույթներում պետք է դառնան դպրոցների, ուսումնարանների եւ համալսարանների երաժշտական պլանների մասը: Ծնողները պետք է խրախուսեն եվ դուստրերի եւ որդիների երաժշտական տաղանդը, հաշվի առնելով երկու սեռերի մշակութային ժառանգությունը եւ ավանդույթները:

. Կոչ է արվում կին երաժիշտներին կարգալ, ընդունել եւ օգտագործել UNESCO-ի փաստաթղթերը՝ Արվեստագետի Իրավունքները եւ Համաշխարհային Միջկառավարական Կոնֆերանսի Վերջնական Փաստաթուղթը Չարգացման Մշակութային Քաղաքականության վերաբերյալ:

. Հարկ է ճանաչել կանանց ձեռքբերումները մշակույթում եւ զարգացման մեջ, ապահովելու համար նրանց մասնակցությունը բոլոր մակարդակների մշակութային քաղաքականության կազմավորման եւ իրականացման մեջ, ինչպես նաեւ նրանց իրավունքը ստանձնելու որոշում կայացնողի պաշտոններ մշակույթի աշխարհում: Կարելի է պահպանել, աջակցել եւ պաշտպանել կին արվեստագետների եւ ստեղծագործողների իրավունքները բոլոր հանրություններում: Սիայն այս կերպ մենք կարող ենք հաղթահարել եւ վերափոխել տղամարդկանց հնացած միակողմանի վերաբերմունքը մշակույթին եւ ժառանգությանը:

. Մեր դերը նյութական եւ հոգեւոր ժառանգության փոխանցման մեջ չպետք է անուշադրության մատնվի, քանի որ այն պատկանում է ոչ միայն մեկ ազգի կամ մշակույթի, այլ ամբողջ մարդկությանը: